ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13

ք. Երևան

«24» «03» 2023թ.

Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գարանտ Մոթորս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հովհաննիսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնացուցակի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր- գնացուցակին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 960000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վիճակագրական կոմիտե	<<Գարանտ Մոթորս>> ՍՊԸ
Կառավարական տուն 3	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
ՀՎՀՀ 02507509	ՀՎՀՀ 01310872
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021, Գ. 900011011054	Հ/Հ 2470075092810000
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
Ա. Հայրապետյան---------- (ստորագրություն)	Ս. Հովհաննիսյան ---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«24» «03» 2023թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆԱՑՈՒՑԱԿ

առանձին տեսակի ծառայության մատուցման համար ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևով հաշվարկված միավորի գների

ՀՀ դրամ

	Ծառայության անվանումը		Առանձին տեսակի ծառայության մատուցման համար հաշվարկված միավորի գները						
Հ/հ	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ, այդ թվում	Չ/մ	Տոյոտա Քամրի մակնիշի /2013թ. շարժիչ 2.5 լիտր/	Հյունդայի Սոնատա /2012 թ. 2.4 լիտր/	Հյունդայի Էլանտրա /2012 թ. 1.6 լիտր/	Հյունդայի Էլանտրա /2011 թ. 1.6 լիտր/	Ռենո Սանդեռո մակնիշի /2010թ. շարժիչ 1.4 լիտր/	Կիա Օպտիմա մակնիշի /2013թ. շարժիչ 2.4 լիտր/	Նիսսան Ուրվան մակնիշի /2010թ. շարժիչ 3.0 լիտր/
	1.Ավտոմեքենայի ստուգման ծառայություններ								
1	Համակարգչային ախտորոշում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ								
3	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000

4	Օդի զտիչի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
5	Օդորակիչի զտիչի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
6	Վառելիքի զտիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
7	Բենզամղիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
8	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	20000	20000	20000	20000	20000	20000	20000
9	Ակսելերատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
10	Ակսելերատորի մաքրում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
	3. Սառեցման և արտածման համակարգ								
11	Փոկի հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
12	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
13	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	25000	25000	25000	25000	25000	25000	25000
14	Ռադիատորի վերանորոգում	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000
15	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	60000	60000	60000	60000	60000	60000	60000
16	Թերմոստատի փոխարինում	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000
17	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	3500	3500	3500	3500	3500	3500	3500
18	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
19	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
20	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000

21	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	հատ	15000	15000	15000	[redacted]	[redacted]	15000	[redacted]
	4. Կախոց								
22	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000
24	Փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
25	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
26	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
27	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
28	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
29	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	7500	7500	7500	7500	7500	7500	7500
30	Ձսպանակի հանում և տեղադրում	հատ	7500	7500	7500	7500	7500	7500	7500
31	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	7500	7500	7500	7500	7500	7500	7500
32	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	7500	7500	7500	7500	7500	7500	7500
33	Ներքևի լծակի վռանների փոխարինում	հատ	6500	6500	6500	6500	6500	6500	6500
34	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	6500	6500	6500	6500	6500	6500	6500
35	Գնդե հոդակապերի փոխարինում	հատ	6500	6500	6500	6500	6500	6500	6500

36	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	6500	6500	6500	6500	6500	6500	6500
37	Ծայրակաների հանում և տեղադրում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
38	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
39	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
40	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
41	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
42	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
43	Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
44	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
45	Փոխանցման տուփի հանում և տեղադրում	հատ	60000	60000	60000	60000	60000	60000	60000
46	Կցորդման տանող և տարվող սկավառակների փոխարինում	հատ				40000	40000		40000
47	Անվաբացքի կարգավորում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
	5. Ղեկային մեխանիզմ								
48	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	55000	55000	55000	55000	55000	55000	55000
49	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	85000	85000	85000	85000	85000	85000	85000
50	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000

51	Ղեկային ծողի նորոգում	հատ	25200	25200	25200	25200	25200	25200	25200
52	Ղեկային ժապավենի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
53	Հիդրոուժեղարարի յուղի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
	6. Արգելակային համակարգ								
54	Գլխ. գլանի հանում և տեղադրում	հատ	25000	25000	25000	25000	25000	25000	25000
55	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	հատ	20000	20000	20000	20000	20000	20000	20000
56	Արգելակային համակարգի օդահանում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
57	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
58	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
59	Առջևի սուպպորտի վերանորոգում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
60	Հետևի սուպպորտի վերանորոգում	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
61	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
62	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
63	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
64	Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000

65	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
66	Արգելակային սկավառակի հղկում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
67	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
68	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
	7. Էլեկտրասարքավորում								
69	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
70	Լամպի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
71	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
72	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
73	Ապակեամբարձիչի հանում և տեղադրում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
74	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
75	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
76	Գեներատորի նորոգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
77	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
78	Մեկնարկիչի նորոգում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
79	Լապտերների կարգավորում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
80	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
81	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000

82	Ապակելվացիչի պոմպի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
83	Ապակելվացիչի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
84	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	25000	25000	25000	25000	25000	25000	25000
85	Ապահովիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
	8. Այլ ծառայություններ								
86	Անիվի հանում և տեղադրում	հատ	1500	1500	1500	1500	1500	1500	1500
87	Անվադողի քանդում և հավաքում	հատ	1500	1500	1500	1500	1500	1500	1500
88	Անիվի հավասարակշռում	հատ	1500	1500	1500	1500	1500	1500	1500
89	CO-զոդման աշխատանքներ	սմ	1500	1500	1500	1500	1500	1500	1500
90	Խառատային աշխատանքներ	կտոր	1500	1500	1500	1500	1500	1500	1500
91	Փականագործի աշխատանքներ	ժամ	1500	1500	1500	1500	1500	1500	1500
92	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	հատ	75000	75000	75000	75000	75000	75000	75000
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները								
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ								
1	Յուղ շարժիչի սինթետիկ 5W40	լիտր	[redacted]					6000	6000
2	Յուղ շարժիչի սինթետիկ 5w30	լիտր	[redacted]					6000	6000
3	Յուղի զտիչ	հատ	[redacted]					4000	4000
4	Յուղի փողրակ	հատ	13000	12000	11000	11000	13000	12000	13000
5	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	65000	65000	45000	45000	65000	65000	65000
6	Վառելանյութի փողրակ	հատ	11000	9000	8500	8500	11000	9000	11000
7	Օդի զտիչ	հատ	4000	4500	4000	4000	4000	4500	4000
8	Վառելիքի զտիչ	հատ	28000	16000	15000	15000	28000	16000	28000
9	Օդորակիչի զտիչ	հատ	5000	4500	4000	4000	5000	4500	5000
10	Ջերմաստիճանային տվիչ	հատ	10000	9000	8000	8000	10000	9000	10000

11	Յուղի տվիչ	հատ	11000	10000	10000	10000	11000	10000	11000
12	Բաշխիչ լիսեռի տվիչ	հատ	25000	22000	21000	21000	25000	22000	25000
13	Ծնկաձև լիսեռի տվիչ	հատ	28000	25000	21000	21000	28000	25000	28000
14	Մաքրող հեղուկ ABRO	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
15	Օդի ծախսի տվիչ	հատ	65000	45000	35000	35000	65000	45000	65000
	2. Սառեցման և արտածման համակարգ								
16	Հովհար	հատ	75000	65000	58000	58000	75000	65000	75000
17	Ռադիատոր	հատ	165000	165000	125000	125000	165000	165000	165000
18	Ընդարձակող բաք	հատ	21000	18000	15000	15000	21000	18000	21000
19	Ընդարձակող բաքի փական	հատ	7000	7000	7000	7000	7000	7000	7000
20	Հովացման համակարգի փողրակ	հատ	13000	14000	12000	12000	13000	14000	13000
21	Թերմոստատ	հատ	21000	12000	11000	11000	21000	12000	21000
22	Սառեցման հեղուկ	լիտր	2000	2000	2000	2000	2000	2000	2000
23	Հոլովակ	հատ	22000	21000	21000	21000	22000	21000	22000
24	Փոկ	հատ	32000	22000	22000	22000	32000	22000	32000
25	Խլարարի ներդիր	հատ	8000	6000	6000	6000	8000	6000	8000
26	Խլարարի կախոց	հատ	6000	6000	5000	5000	6000	6000	6000
27	Կրոնշտեյն	հատ	11000	11000	10500	10500	11000	11000	11000
28	Անուր (Խամուտ)	հատ	500	500	500	500	500	500	500
29	Վառարանի ռադիատոր	հատ	85000	75000	75000	75000	85000	75000	85000
30	Վառարանի շարժիչ	հատ	32000	30000	25000	25000	32000	30000	32000
31	ԱՓՏ-ի զտիչ	հատ	28000	22000	22000			22000	
32	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	11000	9000	9000	9000	11000	9000	11000
33	ԱՓՏ յուղ	լիտր	11000	9000	9000			9000	
34	Հերմետիկ	հատ	4000	4000	4000	4000	4000	4000	4000
	3. Կախոց								
35	Շարժիչի բարձիկ	հատ	75000	70000	60000	60000	75000	70000	75000
36	Փոխանցման տուփի բարձիկ	հատ	65000	60000	55000	55000	65000	60000	65000

37	Ձախ կամ աջ հոդակապ	հատ	135000	105000	85000	85000	135000	105000	135000
38	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	հատ	10000	9000	9000	9000	10000	9000	10000
39	Անվակունդ	հատ	65000	60000	55000	55000	65000	60000	65000
40	Անվակունդի առանցքակալ	հատ	25000	21000	21000	21000	25000	21000	[redacted]
41	Անվակունդի խցուկ	հատ	11000	7000	7000	7000	11000	7000	11000
42	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	հատ	11000	7000	7000	7000	11000	7000	11000
43	Հարվածամեղմիչի թասակ	հատ	32000	21000	19000	19000	32000	21000	32000
44	Առջևի ցնցամեղմիչ	հատ	55000	52000	48000	48000	55000	52000	55000
45	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	18000	9000	9000	9000	18000	9000	18000
46	Ներքևի լծակ	հատ	65000	65000	60000	60000	65000	65000	65000
47	Ներքևի լծակի վռան	հատ	9500	9500	9500	9500	9500	9500	9500
48	Գնդե հոդակապ	հատ	21000	14000	11000	11000	21000	14000	21000
49	Առջևի կայունարարի վռան	հատ	4000	5000	4000	4000	4000	5000	4000
50	Հետևի կայունարարի վռան	հատ	4000	5000	4000	4000	4000	5000	4000
51	Կայունարարի կանգնակ	հատ	11000	14000	11000	11000	11000	14000	11000
52	Հետևի ցնցամեղմիչ	հատ	55000	50000	35000	35000	55000	50000	55000
53	Աջ կամ ձախ ձգան	հատ	22000	18000	14000	14000	22000	18000	22000
54	Ծայրակալ	հատ	16000	15000	12000	12000	16000	15000	16000
55	Կցորդման տանող և տարվող սկավառակներ	հատ	[redacted]	[redacted]	[redacted]	95000	105000	[redacted]	165000
56	Քսայուղ լիտոլ	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
	4. Ղեկային մեխանիզմ								
57	Ղեկային կալունի խաչուկ	հատ	75000	65000	55000	55000	75000	65000	75000
58	Հիդրոուժեղարարի փողրակ	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000
59	Ղեկային ժապավեն	հատ	45000	45000	45000	45000	45000	45000	45000
60	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	9000	9000	9000	9000	9000	9000	9000
	5. Արգելակային համակարգ								
61	Գլխ. գլան	հատ	55000	55000	50000	50000	55000	55000	55000
62	Վակուումային ուժեղարար	հատ	105000	75000	65000	65000	105000	75000	105000

63	Արգելակային փողրակ	հատ	18000	14000	14000	14000	18000	14000	18000
64	Սուպպորտի ուղղորդիչ	հատ	9000	9000	9000	9000	9000	9000	9000
65	Սուպպորտի մանժետ	հատ	16000	15000	14000	14000	16000	15000	16000
66	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	28000	22000	22000	22000	28000	22000	28000
67	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	18000	15000	15000	15000	18000	15000	18000
68	Առջևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	55000	50000	45000	45000	55000	50000	55000
69	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	55000	50000	45000	45000	55000	50000	55000
70	Ձեռքի արգելակի ճոպան	հատ	35000	35000	40000	40000	35000	35000	35000
71	ABS-ի տվիչ	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000
72	Արգելակային հեղուկ՝ DOT-3	գրամ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
	6. Էլեկտրասարքավորում								
73	Լամպ	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
74	Թարթիչի լապտերի լամպ	հատ	2000	500	500	500	2000	500	2000
75	Հակամշուշային լապտերի լամպ	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
76	Դիմահար լամպ	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000
77	Հեռահար լամպ	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000
78	Գեներատորի դիոդային կամրջակ	հատ	22000	22000	20000	20000	22000	22000	22000
79	Գեներատորի ռելե	հատ	25000	32000	28000	28000	25000	32000	25000
80	Գեներատորի առանցքակալ	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
81	Գեներատորի խարիսխ	հատ	75000	75000	75000	75000	75000	75000	75000
82	Մեկնարկիչի ռելե	հատ	7000	7000	7000	7000	7000	7000	7000
83	Մեկնարկիչի ածուխ	հատ	18000	18000	13000	13000	18000	18000	18000
84	Մեկնարկիչի ավտոմատ	հատ	25000	25000	25000	25000	25000	25000	25000
85	Մեկնարկիչի բենդեքս	հատ	28000	22000	21000	21000	28000	22000	28000
86	Վառոցքի կոճ	հատ	30000	25000	22000	22000	30000	25000	30000
87	Վառոցքի մոմ	հատ	11000	11000	11000	11000	11000	11000	11000
88	Ապակելվացիչ	հատ	4000	4000	4000	4000	4000	4000	4000

89	Ապակելվացիչի պոմպ	հատ	22000	19000	16000	16000	22000	19000	22000
90	Ապակելվացիչի հեղուկի տարա	հատ	25000	25000	21000	21000	25000	25000	25000
91	Ապահովիչ	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
92	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	45000	35000	35000	35000	45000	35000	45000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ.900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտ Մոթորս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
ՀՎՀՀ 01310872
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
Տնօրեն
Ս. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«24» «03» 2023թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

Ծառայության													
N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	I եռ		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև դեկտեմբերի 19-ը/		Ընդամենը	
				քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/													
1	50111130/1	Տոյոտա Քամրի պ/հ 032LL55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	18.0	1	63.0	1	108.0	1	180.0	1	180.0
2	50111130/2	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	14.0	1	49.0	1	84.0	1	140.0	1	140.0
3	50111130/3	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	14.0	1	49.0	1	84.0	1	140.0	1	140.0
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/													
4	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	25.0	1	56.25	1	87.5	1	125.0	1	125.0
5	50111130/2	Ռենո Սանդերո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	25.0	1	56.25	1	87.5	1	125.0	1	125.0

Գ. «Հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում» միջոցառում /01.03.02.1143.11003/														
6	50111130/1	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	12.5	1	43.75	1	75.0	1	125.0	1	125.0
7	50111130/2	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	12.5	1	43.75	1	75.0	1	125.0	1	125.0

**գնման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտ Մոթորս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
ՀՎՀՀ 01310872
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
Տնօրեն
Ս. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«24» «03» 2023թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/															
1	50111130/1	Տոյոտա Քամրի պ/հ 032LL55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			18.0	63.0	63.0	63.0	108.0	108.0	108.0	180.0	180.0	180.0	180.0
2	50111130/2	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			14.0	49.0	49.0	49.0	84.0	84.0	84.0	140.0	140.0	140.0	140.0
3	50111130/3	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			14.0	49.0	49.0	49.0	84.0	84.0	84.0	140.0	140.0	140.0	140.0
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/															
4	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			25.0	56.25	56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0
5	50111130/2	Ռենո Սանդեռո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			25.0	56.25	56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0

Գ.«Հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում» միջոցառում /01.03.02.1143.11003/																
6	50111130/1	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			12.5	43.75	43.75	43.75	75.0	75.0	75.0	125.0	125.0	125.0	125.0
7	50111130/2	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			12.5	43.75	43.75	43.75	75.0	75.0	75.0	125.0	125.0	125.0	125.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտ Մոթորս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 20
ՀՎՀՀ 01310872
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
Տնօրեն՝
Ս. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
« 24 » «03» 2023թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 24 » «03» 2023թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2023/13
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն